## ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է ՀՀ ԱԺ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստին

25.05.2016



Մայիսի 24-ին ՀՀ Ազգային ժողովում տեղի է ունեցել Ազգային ժողովի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստը, որին մասնակցել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը և հանդես է եկել Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական բյուջեով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին հատկացված գումարների և մարզի համայնքներին հատկացված դոտացիաների կատարման տարեկան հաշվետվությամբ (եկամուտների եւ ծախսերի կատարողական):